Մեկը հավերժի ճամփորդներից

Ավետիք Իսահակյանի ծննդյան 130-ամյակին նվիրված միջոցառումները (գրքի տպագրություն, ցուցահանդեսներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, հեռուստահաղորդումներ, այցելություններ եւ այլն) սկիզբ էին առել ապրիլ ամսից եւ ամփոփվեցին Վարպետին նվիրված գիտական ընթերցումներով: Նախաձեռնողն ու իրականացնողը Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանն էր, իսկ եզրափակիչ գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԳԱ գրականության ինստիտուտի եւ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հետ համատեղ:

Վարպետի հարկի տակ հավաքվել էին նրա ստեղծագործության երկրպագուները՝ լսելու բանասիրության դոկտորներ **Ավիկ Իսահակյանի, Ազատ Եղիազարյանի, Սամվել Մուրադյանի, Վլադիմիր Կիրակոսյանի, Ալբերտ Մուշեղյանի**, բանասիրության թեկնածուներ **Անահիտ Վարդանյանի, Անժելա Խորենյանի** ելույթները՝ *«Իսահակյանը եւ հայկական հարցը», «Իսահակյանի մեկ բանաստեղծության պատմություն», «Ավետիք Իսահակյանի երկու «Բինգյոլը», «Շուշիկի կերպարը Իսահակյանի քնարերգությունում», «Ավ. Իսահակյանի ձեռագրերի աշխարհում. «Գյոթեի վերջին սերը»», «Ազգային ազատագրական պայքարի արծարծումը «Մասսա Մանուկ» պոեմում», «Անավարտության խնդիրը «Ուստա Կարո» վեպում»* թեմաներով: Ուշագրավ փաստերի, բացահայտումների, մեկնաբանությունների շնորհիվ բանախոսները փորձեցին նոր լույսի տակ ներկայացնել Վարպետի ստեղծագործական դավանանքը, ներանձնական ապրումները, հայրենասիրական մղումները, քաղաքացիական դիրքորոշումն ու նրա վիթխարի անհատականությունը հատկանշող շատ այլ դրսեւորումներ: Բարձրացված խնդիրների շուրջ ծավալվեցին ակտիվ քննարկումներ ու բանավեճեր, որոնք շահագրգիռ միտում ունեին առավել համակողմանիորեն եւ ճշգրիտ արժեւորել Իսահակյանի խորախորհուրդ աշխարհը: Այս միջոցառումով սկիզբ դրվեց իսահակյանական գիտական ընթերցումների ավանդույթին: Նշվեց, որ դրանք կհամալրեն թումանյանական եւ չարենցյան գիտական ընթերցումների շարքը:

Միջոցառումն ամփոփող խոսքում Սամվել Մուրադյանն իր գոհունակությունն ու գնահատանքն արտահայտեց կազմակերպիչներին՝ Վարպետի հետ այդ յուրօրինակ շփումն իրագործելու համար:

Գիտաժողովից հետո տուն-թանգարանի տնօրեն **Հասմիկ Մելքոնյանին** խնդրեցինք իր խոսքն ուղղել **«Կրթություն»** թերթի ընթերցողներին: Նա ասաց. *«Դպրոցականներին եւ ուսուցիչներին կցանկանայի ասել, որ Վարպետի տուն այցելությունը նրանց համար ոչ միայն հուզական ապրումների առիթ կդառնա, նրանք ոչ միայն կտեսնեն այն տունը, կզգան այն մթնոլորտը,*

որի մեջ Իսահակյանն ապրել, շնչել, ստեղծագործել է, այլեւ կընդլայնեն իրենց իմացությունները նրա մասին: Տարիների փորձը ցույց է տվել, որ թանգարանն Իսահակյանի մասին ավելի շատ տեղեկություններ է տալիս, քան ընդգրկում է դպրոցական ծրագիրը: Սա վկայում են հենց իրենք՝ ուսուցիչները: Դա ամենամեծ վարձատրությունն է թանգարանի աշխատողներիս համար: Եվ ցանկալի է, որ այցելությունը թանգարան ոչ թե կրի ձեւական բնույթ, այլ լինի հոգու թելադրանքով, գիտակցված: Եվ ճիշտ կլինի, որ ուսուցիչներն, աշակերտներին տվյալ գրողի տուն-թանգարան տանելուց առաջ, նախապատրաստեն նրանց, ծանոթացնեն նյութին, բացատրեն, թե ուր են գնալու: Այս դեպքում այցելություններն, անշուշտ, կտան առավել ցանկալի արդյունք»:

Կարինե ՌԱՖԱՅԵԼՅԱՆ